

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 2

03.11.2020թ.

1. ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակը:

- Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Շինարարություն» մասնագիտության «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի Լիանա Սամվելի Իվանյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար, նշանակել ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան կրթաթոշակ, 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

- Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Գյուղատն-տեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 5-րդ կուրսի անվճար համակարգի ուսանող Նարեկ Անուշավանի Յաղուբյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար, նշանակել պրոֆեսոր Ս.Ս. Սահակյանի անվան կրթաթոշակ, 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Տրանսպորտային համակարգեր» մասնագիտության «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 5-րդ կուրսի անվճար համակարգի ուսանողուհի Մարիա Վարազդատի Հարությունյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար, նշանակել պրոֆեսոր Հ.Վ. Մաքսապետյանի անվան կրթաթոշակ, 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Տրանսպորտային համակարգեր» մասնագիտության «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 2-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Ռաֆայել Հայկի Վարդանյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար, նշանակել ակադեմիկոս Ա.Ա. Մաթևոսյանի անվան կրթաթոշակ, 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտության «Կենսագործունեության անվտանգություն» կրթական ծրագրի 2020-2021 ուստարվա 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Նորայր Ավետիսի Հարությունյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար, նշանակել Ա.Ղ. Խանջյանի անվան կրթաթոշակ, 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը:

2. ՀԱԱՀ ագրոնոմիական ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ագրոնոմիական ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակը:

- Ագրոնոմիական ֆակուլտետի առկա ուսուցման 2020/2021 ուս. տարվա «Ագրոնոմիա» մասնագիտության «Բույսերի պաշտպանություն» կրթական ծրագրի անվճար համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Հարությունի Իսոյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել ակադեմիկոս Ա.Գ. Թումանյանի անվան կրթաթոշակ ս.թ սեպտեմբերի 1-ից մինչև 2021թ-ի հունվարի 31-ը ժամկետով:

- Ագրոնոմիական ֆակուլտետի 2020/2021 ուստարվա «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության «Ագրոէկոլոգիա» կրթական ծրագրի անվճար համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Սարե Սերյոժայի Գալստյանին, գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել ակադեմիկոս Գ.Խ. Աղաջանյանի անվան կրթաթոշակ սույն թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021թ-ի հունվարի 31-ը ժամկետով:

3. ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակի հաստատման վերաբերյալ.

Հաստատել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակը:

- Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուծություն» մասնագիտության «Գ/Կ սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 4-րդ կուրսի անվճար համակարգի գերազանց առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեություն ցուցաբերած ուսանող Կորյուն Արտաշեսի Նիկոյանին նշանակել ակադեմիկոս Ա.Զ.Թամամշևի անվան կրթաթոշակ 2020թ. սեպտեմբերի 01-ից մինչև 2021թ. հունվարի 31-ը:

- Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուծություն» մասնագիտության «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» կրթական ծրագրի 2020-2021 ուստարվա 5-րդ կուրսի անվճար

համակարգի, գերազանց առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեությունն ցուցաբերած ուսանողուհի Աննա Պետրոսի Թումայանին նշանակել ակադեմիկոս Ա.Ա.Ռուխկյանի անվան կրթաթոշակ 2020թ. սեպտեմբերի 01-ից մինչև 2021թ. հունվարի 31-ը:

4. ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակը:

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման գերազանց առաջադիմության և հասարակական ակտիվ գործունեության համար ներքոհիշյալ ուսանողներին 2020/21 ուստարվա 1-ին կիսամյակում նշանակել անվանական կրթաթոշակ 2020թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2021թ. հունվարի 31-ը.

<i>Հ/հ</i>	<i>Ազգանուն, անուն, հայրանուն</i>	<i>Մասնագիտ., կուրս</i>	<i>Անվանական կրթաթոշակը</i>
1	Համբարձումյան Անահիտ Սլավիկի	ԱՔԽՏ - 4	Վ. Թոթոմյանցի անվ.
2	Դաջունց Սոնա Անուշավանի	ՖԻՆ - 4	Բ. Մարտիրոսյանի անվ.
3	Սարգսյան Մարիամ Հովհաննեսի	ԱԷԿ - 5	Ա. Քոչինյանի անվան
4	Գասպարյան Ասյա Սեդրակի	ՀՀ - 5	Ա. Մարգարյանի անվան

5. ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակի հաստատման վերաբերյալ.

Հաստատել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակառուների ցուցակը:

- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 4-րդ կուրսի անվճար համակարգի ուսանող Գեվորգ Սասունի Ամալյանին գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել պրոֆեսոր Վ. Ե. Թաիրովի անվան կրթաթոշակ 01.09.2020թ. մինչև 31.01.2021 թ.:

- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 4-րդ կուրսի անվճար համակարգի ուսանող Դավիթ Էրիկի

Օրդինյանին գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել պրոֆեսոր Զ. Խ. Դիլանյանի անվան կրթաթոշակ 01.09.2020թ. մինչև 31.01.2021թ.:

- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 4-րդ կուրսի անվճար համակարգի ուսանողուհի Նարե Վահրամի Բաղդասար-յանին գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել պրոֆեսոր Ա. Հ. Քալանթարի անվան կրթաթոշակ 01.09.2020թ. մինչև 31.01.2021թ.:

- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա 4-րդ կուրսի անվճար համակարգի ուսանող Արմեն Կարենի Սոլոմոն-յանին գերազանց առաջադիմության և ակտիվ հասարակական գործունեության համար նշանակել կոնյակագործ Մարգար Սեդրակյանի անվան կրթաթոշակ 01.09.2020թ. մինչև 31.01.2021 թ.:

6. «Ագրոնոմիա» մասնագիտության «Ագրոնոմիա» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկող փոփոխությունների վերաբերյալ.

6.1. Հաստատել «Ագրոնոմիա» մասնագիտության «Ագրոնոմիա» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխությունը:

6.2. «Ագրոնոմիա» մասնագիտության «Ագրոնոմիա» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում երկրորդ կիսամյակում տեսական ուսուցման տևողությունը 14 շաբաթից դարձնել 15 շաբաթ՝ դասընթացների համապատասխան ժամային փոփոխություններով, գիտահետազոտական պրակտիկայի տևողությունը՝ 6 շաբաթից կրճատել 4 շաբաթ, «Ագրոնոմիա» մասնագիտության «Բույսերի պաշտպանություն» կրթական ծրագրում փոփոխել գիտահետազոտական պրակտիկայի տևողությունը՝ 2 շաբաթից դարձնելով 4 շաբաթ:

7. «Ագրոնոմիա» մասնագիտության «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկող փոփոխությունների վերաբերյալ.

7.1. Հաստատել «Ագրոնոմիա» մասնագիտության «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխությունը:

7.2. «Ագրոնոմիա» մասնագիտության «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված.

- «Անզլերեն» դասընթացին հատկացված ամբողջ լսարանային ժամերը ձևակերպել որպես գործնական,

- «Բնական ռեսուրսների հարակայուն կառավարում» և «Օրգանական գյուղատնտեսության էթիկա» դասընթացները կհասանելի են լինում տեղափոխել:

8. «Շինարարություն» մասնագիտության բակալավրիական կրթական ծրագրերի փոփոխությունների վերաբերյալ.

8.1. Հաստատել «Շինարարություն» մասնագիտության բակալավրիական կրթական ծրագրերի փոփոխությունները:

8.2. «Շինարարություն» մասնագիտության բակալավրիական կրթական ծրագրերում 4-րդ կիսամյակի «Ազրոնոմիայի հիմունքներ» առարկայի 4 կրեդիտը դարձնել՝ 6, փոխարենը՝ «Կիրառական մեխանիկա» և «Էլեկտրոտեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ» առարկաների 6 ական կրեդիտները վերափոխել 5 ականի՝ պահպանելով տվյալ կիսամյակի համար կրեդիտների ընդհանուր քանակը:

9. «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում» և «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունների վերաբերյալ.

9.1. Հաստատել «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում» և «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունները:

9.2. «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում» և «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մագիստրոսական կրթական ծրագրերի 2-րդ կիսամյակում իրականացնել հետևյալ տեղափոխությունը.

- Մեքենաների վերանորոգման նորագույն տեխնոլոգիաներ և նյութեր (ԳՄԱՏՇ) պարտադիր առարկան դարձնել կամընտրային, իսկ «ՄՏ հավաքակալանի կազմակերպում շահագործում (ԳՄԱՏՇ)» կամընտրային առարկան պարտադիր:

10. «Անասնաբուժական» մասնագիտության «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա» բակալավարի կրթական ծրագրի փոփոխության վերաբերյալ.

10.1. Հաստատել «Անասնաբուժական» մասնագիտության «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա» բակալավարի կրթական ծրագրի փոփոխությունը:

10.2. «Անասնաբուժական» մասնագիտության «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա» բակալավարի կրթական ծրագրի 4-րդ կիսամյակի 7 կրեդիտով Գ/կ բուժում առարկան հանել և ավելացնել «Գյուղատնտեսության էկոնոմիկա» առարկան 4 կրեդիտով, «Անասնապահական ֆերմաների մեքենայացում և էլեկրտաֆիկացում» առարկան ավելացնել 1-ով կրեդիտով, իսկ «Կենդանիների բարեկեցություն և էթոլոգիա» առարկան ավելացնել 2-ով կրեդիտով: Կամրնտրային առարկաների ցանկից հանել «Կիրառական գյուղատնտեսութ. և սննդի մարքեթինգ» առարկան:

11. «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտական կրթական ծրագրի փոփոխության վերաբերյալ.

11.1. Հաստատել «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտական կրթական ծրագրի փոփոխությունը:

11.2. «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտական կրթական ծրագրում «Արտադրության սանիտարիա և հիգիենա» առարկան ուսանելու համար ուսանողը պետք է մասնագիտական պատրաստվածություն ունենա առնվազն «Գինու տեխնոլոգիա» և «Մանրէակեսաբանություն» առարկաներից, այդ նպատակով «Արտադրության սանիտարիա և հիգիենա» առարկան (64 ժամ, 4 կերդիտ) 4-րդ կիսամյակից տեղափոխել 6-րդ կիսամյակ, իսկ 6-րդ կիսամյակի «Շրջակա միջավայրի պահպանություն» առարկան (64 ժամ, 4 կերդիտ)՝ 4-րդ կիսամյակ:

12. ՀԱԱՀ 2020-2021 ուս. տարվա առաջին կուրսի ասպիրանտների, հայցորդների համար ուսումնական գործընթացի կազմակերպումն անհատական ուսումնական պլաններով իրականացնելու վերաբերյալ՝ համաձայն ՈԳԱ կենտրոնի կողմից ներկայացված նախագծի.

ՀԱԱՀ 2020-2021 ուս. տարվա առաջին կուրսի ասպիրանտների, հայցորդների համար ուսումնական գործընթացի կազմակերպումն իրականացնել ՈԳԱ կենտրոնի կողմից ներկայացված անհատական ուսումնական պլաններով՝ հիմք ընդունելով ՈԳԱ կենտրոնի կողմից ներկայացված նախագիծը (քննարկման ընթացքում առաջարկված փոփոխություններով. կցվում է արձանագրությանը):

13. ՈԳԱ կենտրոնի կողմից ներկայացված առարկայական ծրագրի ձևաչափի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ՈԳԱ կենտրոնի կողմից ներկայացված առարկայական ծրագրի ձևաչափը:

14. ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ Արամ Յուլակի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ.



ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ Արամ Յուլակի Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

15. Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման «Անսահմանափակ տիրույթներում որոշ ոչ գծային եզրային խնդիրների լուծելիության հարցեր» թեմայով ծրագրի (ղեկավար՝ Ա.Խ. Խաչատրյան) ամփոփիչ հաշվետվության հաստատման և ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտե ներկայացնելու երաշխավորման հարցի վերաբերյալ.

Հաստատել Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման «Անսահմանափակ տիրույթներում որոշ ոչ գծային եզրային խնդիրների լուծելիության հարցեր» թեմայով ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը և երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտե ներկայացնելու համար (ղեկավար՝ Ա.Խ. Խաչատրյան):

16. ՀԱԱՀ գիտական խորհրդի 2020-2021թ. ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ գիտական խորհրդի 2020-2021թ. ուսումնական տարվա աշխատանքային պլանը;

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝		Վ. Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Գ. Վ. ԱՎԱԳՅԱՆ